ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 ապրիլի 2023 թվականի թիվ 19-Ա
ք. Երևան

«ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով «ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության 2023 թվականի ապրիլի 12-ի հեղինակազորման վկայագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը 2022 թվականի ապրիլի 26-ին տրամադրված ՀՎ № 059 հեղինակազորման վկայագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. ապրիլի 17
ք. Երևան